

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	3
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	6
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	9
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿԸ	10
ԱՄՓՈՓՈՒՄ	10

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2019 թվականի առաջին եռամսյակի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության զարգացումն ընթանում է նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով: ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 7.1 տոկոս, որը 2018թ. համապատասխան ցուցանիշից 3.1 տոկոսային կետով ցածր է: Աճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության աճի դանդաղմամբ, ինչը բացատրվում է և՛ մշակող արդյունաբերության աճի տեմպի դանդաղմամբ (2018թ. 11.8 տոկոս աճի դիմաց 2019թ.-ին աճը եղել է 5.1 տոկոս), և՛ հանքագործական արդյունաբերության ծավալների անկմամբ (2018թ. 19.0 տոկոս աճի դիմաց 2019թ. եղել է 6.5 տոկոս անկում): Այսպես՝ մշակող արդյունաբերությունը 2018թ. առաջին եռամսյակի 1.4 տոկոսային կետ նպաստման փոխարեն 2019-ին ունեցել է 0.6 տոկոսային կետ նպաստում, հանքագործական արդյունաբերությունը 0.7 տոկոսային կետի փոխարեն ունեցել է -0.3 տոկոսային կետով բացասական նպաստում, իսկ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ -0.1-ի փոխարեն ունեցել է -0.2 տոկոսային կետով բացասական նպաստում:

Հանքարդյունաբերության ոլորտում մետաղական հանքերի արդյունահանումը 2019թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազել է 5.0 տոկոսով: Մշակող արդյունաբերության կառուցվածքում նվազել են դեղագործական արտադրանքի և հիմնային մետաղների արտադրության ծավալները՝ համապատասխանաբար 13.2 և 10.3 տոկոսով:

Վարչապետն իր հայտարարություններում հաճախ նշում է, որ հանքագործական արդյունաբերության փոխարեն պետք է զարգացնել մշակող արդյունաբերությունը: Սակայն, պետք է նկատել, որ վարվող քաղաքականության արդյունքում ոչ միայն հանքագործական արդյունաբերությունն է անկում գրանցել 0.3 տոկոսով, այլև նվազել է մշակող արդյունաբերության աճի տեմպը (նախորդ տարվա առաջին եռամսյակի 11.8 տոկոս աճի փոխարեն 2019թ. առաջին եռամսյակում գրանցվել է 5.1 տոկոս աճ):

Գրանցված 7.1 տոկոս տնտեսական աճին ամենամեծ նպաստումն ունեցել է ծառայությունների ոլորտը՝ 5.7 տոկոսային կետով¹: Այն խոստումները, որ

¹ Ծառայությունների կառուցվածքում ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ոլորտը: Ընդ որում, այս ոլորտը ընթացիկ տարվա հունվար-մարտին աճել է շուրջ 40 տոկոսով, որից 35.3 տոկոսային կետն ապահովվել է «վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլեխաղերի և բուքմեքերական գործունեության կազմակերպում» ենթաճյուղի, իսկ 5.0 տոկոսային կետը՝ «խաղատների գործունեություն» ենթաճյուղի հաշվին:

Հայաստանը պետք է վերածվի բարձրտեխնոլոգիական երկրի, և տեխնոլոգիաները պետք է դառնան Հայաստանի տնտեսության շարժիչ ուժը, կարծես թե չեն իրականանում, քանի որ տնտեսության շարժիչ ուժը մնում են «վիճակախաղերի, տեսախաղային տերմինալների, վիրտուալ մոլեխաղերի և բուքմեքերական գործունեության կազմակերպում» և «խաղատների գործունեություն» ճյուղերը:

7.1 տոկոս տնտեսական աճին 0.9 տոկոսային կետով նպաստել են արտադրանքի հարկերը (հանած սուբսիդիաները), 5.7 տոկոսային կետով՝ ծառայությունները, 0.11 կետով՝ արդյունաբերությունը, 0.35 կետով՝ շինարարությունը, իսկ գյուղատնտեսությունն ունեցել է զրոյական նպաստում:

Ամբողջական պահանջարկի կառուցվածքում գրանցվել են բացասական միտումներ: Այսպես՝ եթե նախորդ տարի տնտեսական աճը մեծամասամբ պայմանավորված էր ներդրումների աճով, ապա 2019թ. առաջին եռամսյակում աճը պայմանավորվել է միայն սպառման աճով, որն էլ իր հերթին առավելապես ֆինանսավորվել է սպառողական վարկերի հաշվին:

Տարեսկզբից և՛ արտահանման, և՛ ներմուծման դոլարային ծավալները նվազել են համապատասխանաբար 14.5 և 8.9 տոկոսով: Արտահանման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է հանքահումքային արտադրանքի արտահանման անկմամբ, իսկ ներմուծման անկումը՝ սարքավորումների ներմուծման ծավալների անկմամբ:

2019 թվականի առաջին եռամսյակում 12-ամսյա գնաճը եղել է ՀՀ ԿԲ տատանումների թույլատրելի միջակայքից ցածր և կազմել է 1.9%: Նշենք, որ ՀՀ ԿԲ-ի՝ գնաճի թիրախը 4.0 տոկոսն է՝ ± 1.5 տոկոսային կետ թույլատրելի միջակայքով: Նման թիրախի սահմանումը ինքնանպատակ չէ²: ԿԲ թիրախից ցածր գնաճը վտանգում է տնտեսական աճը: Սակայն վարչապետի կողմից բազմիցս ներկայացվում է հակառակը՝ նման ցածր գնաճը գնահատելով որպես կառավարության և ԿԲ ջանքերի արդյունքում ձեռքբերում: Այնինչ, տնտեսական աճ և մակրոտնտեսական կայունություն ապահովելու նպատակով ընդհակառակը՝ պետք է ջանքերն ուղղվեն ԿԲ թիրախին մոտ գնաճ ապահովելու համար:

Տնտեսական զարգացումներից ելնելով՝ ընթացիկ տարվա հունվարին ՀՀ ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով (սահմանելով 5.75%)՝ իրականացնելով խթանող դրամավարկային

² Բոլոր երկրներում գնաճի նպատակադրում ունեցող ԿԲ-երը սահմանում են գնաճի թիրախներ: Զարգացած երկրներում դրանք լինում են 2-3 տոկոսի սահմաններում, իսկ զարգացող երկրներում՝ ավելի բարձր՝ 4 տոկոսի սահմաններում: Մոտ 4 տոկոս գնաճը զարգացող երկրների համար անհրաժեշտ է՝ տնտեսության բնականոն գործունեությունը և աճն ապահովելու համար:

քաղաքականություն: Սակայն, նույնիսկ խթանող քաղաքականության պայմաններում գնաճը չի հասել թիրախին, իսկ 2019 թվականի համար 12-ամսյա գնաճը ԿԲ-ի կողմից կանխատեսել է 2.4 տոկոս, որը թիրախից ցածր է:

2019 թվականի առաջին եռամսյակում հարկաբյուջետային և պարտքի կայունության պահպանման նպատակով հարկաբյուջետային քաղաքականության զսպող ուղղությունը պահպանվել է:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2019 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 319.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 25.0%-ով, իսկ հարկերը և տուրքերը կազմել են 299.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 24.9%-ով: Հարկերի և տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է եկամտային հարկի 50.7 տոկոս աճով (նպաստումը՝ 17.8 տոկոսային կետ), շահութահարկի 137.4 տոկոս աճով (նպաստումը՝ 17.4 տոկոսային կետ) և ԱԱՀ-ի 37.3 տոկոս աճով (նպաստումը՝ 16.1 տոկոսային կետ)³:

Հատկանշական է, որ 2019թ. պետական բյուջեով առաջին եռամսյակի համար այլ եկամուտները նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ պլանավորվել է շուրջ 2.5 անգամ ավելի՝ հիմնականում պայմանավորված իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերով (որոնք 2018թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 7.3 անգամ) և ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից եկամուտներով (աճը եղել է 6.2 անգամ): Սակայն, այս չափով ավելի պլանավորումը կապված է 2018թ. առաջին եռամսյակում պլանի գերակատարման հետ, երբ պլանավորվել էր 5.2 մլրդ դրամ, բայց փաստացի հավաքագրվել էր 14.5 մլրդ դրամ:

³ Նշված համեմատությունը կատարվել է 2018 և 2019 թվականների հարկային եկամուտների հնարավորինս համադրելի ցուցանիշների օգտագործմամբ: Մասնավորապես՝ մեր հաշվարկների համար կիրառվել են ՀՀ ՖՆ-ի կողմից հրապարակված փաստացի հարկային եկամուտների ցուցանիշները, որոնց դեպքում ինչպես 2018, այնպես էլ 2019 թվականների համար առանձին հարկատեսակներից նվազեցված չեն հարկերի անցումային գերավճարները: ՊԵԿ-ի հրապարակած վիճակագրությունում 2018 և 2019 թվականների առանձին հարկատեսակները համադրելի չեն, քանի որ 2019թ. համար անցումային գերավճարները նվազեցված են, իսկ 2018թ. ցուցանիշներից՝ ոչ:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները 2019թ. առաջին եռամսյակում, մլրդ դրամ

	Առաջին եռամսյակի պլան ⁴	Առաջին եռամսյակի ճշտված պլան ⁵	Փաստ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	308.0	309.7	319.8	103.3%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	285.1	286.5	299.7	104.6%
Պաշտոնական դրամաշնորհներ	10.1	10.1	5.1	50.6%
Այլ եկամուտներ	12.8	13.0	15.0	115.1%

Պետական բյուջեի եկամուտների 2019 թվականի առաջին եռամսյակի փաստացի ցուցանիշը գերազանցել է ճշտված պլանի ցուցանիշը 10.1 մլրդ դրամով (3.3 տոկոսով), իսկ հարկային եկամուտների և պետական տուրքերի ցուցանիշը՝ 13.1 մլրդ դրամով (4.6 տոկոսով): Ավելին՝ պաշտոնապես հայտարարվել է, որ 2019թ. հարկային եկամուտները գերակատարվելու են շուրջ 62 մլրդ դրամով: Սակայն այս ցուցանիշը ոչ մի հիմնավորում չունի: Դրա հաշվարկման համար հիմք է եղել հունվար-մարտ ամիսների հարկերի գերակատարումը՝ 13.1 մլրդ դրամը, որը պարզապես բազմապատկելով 4-ով, վարչապետը հայտարարել էր տարվա համար կանխատեսվող 40 մլրդ դրամի հնարավոր գերակատարման մասին: Այնուհետև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապրիլ ամսին հարկային եկամուտները գերակատարվել են 40 մլրդ դրամով, վարչապետն իր հայտարարությամբ գերակատարման ցուցանիշը շտկեց՝ հայտարարելով այն 62 մլրդ դրամ: Սակայն նման կանխատեսումը խիստ վիճելի է, քանի որ որևէ հիմնավորում առկա չէ գերակատարումների շարունակականության ապահովման մասով: Ավելին, չի բացառվում, որ մյուս ամիսներին արձանագրվի հավաքագրման թերակատարում, քանի որ մայիսին արդեն իսկ նախատեսված պլանը 10.4 մլրդ դրամով պակաս է կատարվել⁶:

Վերջերս ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանն անդրադարձ էր կատարել հայտարարված 62 մլրդ դրամ գերակատարմանը՝ նշելով դրա հաշվարկման

⁴ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

⁵ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

⁶ Ապրիլ և մայիս ամիսների կատարողականները դեռևս պաշտոնապես չեն հրապարակվել:

հիմքերը⁷: Նախ, ըստ Անանյանի, 2018թ. 110 մլրդ դրամի չափով գերավճարների մարում է տեղի ունեցել, որը միանվագ ծախս է և 2019թ. չի նախատեսվում կատարել, հետևաբար այդ չափով ավելի կլինեն հարկային եկամուտները: Երկրորդ գործոնը 5% տնտեսական աճի շնորհիվ (2019թ. տնտեսական աճը կանխատեսվել է 4.9 տոկոս) 330-350 մլրդ դրամով ավելի ՀՆԱ-ն է, որից հարկման ենթակա է 72-73 տոկոսը, այսինքն՝ մոտ 230 մլրդ դրամը, որից էլ 47 մլրդ դրամի չափով ավելի հարկեր կհավաքվեն (հարկեր/ՀՆԱ-ի 21 տոկոս մակարդակը հաշվի առնելով): Երրորդ գործոնը հարկերի ավելի խիստ հավաքագրումն է, որից ակնկալվում է 30-40 մլրդ դրամ ավելի շատ հարկեր: Այսպիսով, գումարելով նշված ավելի հավաքագրումները, կստացվի 1 տրլն 465-467 մլրդ դրամ, որը 62-64 մլրդ դրամով ավելի է, քան 2018 թվականին հարկային և մաքսային ընդհանուր հավաքագրումները:

Մի քանի դիտարկում՝ կապված Դ. Անանյանի կողմից ներկայացված ցուցանիշների հետ:

- Նախ, ՀՀ ՊԵԿ-ի պաշտոնական վիճակագրությամբ⁸ անցումային գերավճարները 2018թ. կազմել են ոչ թե 110, այն 55 մլրդ դրամ:
- Բացի այդ, անհասկանալի է, թե ինչու 330-350 մլրդ դրամ ՀՆԱ-ից նախ հաշվարկվել է հարկունակ ՀՆԱ-ն՝ 72-73 տոկոսը, այնուհետև հարկեր/ՀՆԱ-ի 21 տոկոսը: Չէ՞ որ այդ 21 տոկոսը ստացվում է հարկերի և ամբողջ անվանական ՀՆԱ-ի հարաբերակցության արդյունքում: Հետևաբար, պետք էր հաշվել 330-350 մլրդ-ի 21%-ը, այլ ոչ թե 230 մլրդ-ի:
- Առավել անհասկանալի է այն, թե ինչու 2019թ. ՀՆԱ-ի աճից հաշվարկվող ավելի հարկերը ներկայացվում են որպես գերակատարում: 2019թ. բյուջեն պլանավորելիս արդեն հաշվի է առնվել տնտեսական աճը, հետևաբար դրան համապատասխան հարկային եկամուտներն արդեն ներառված են բյուջեի պլանում: Գերակատարում կարող է լինել, եթե ՀՆԱ-ն աճի ոչ թե 4.9 այլ ավելի արագ տեմպերով: Սակայն, տնտեսական զարգացման ընթացիկ միտումներից նման ակնկալիքներ դժվար է ձևավորել:
- Եթե վերոհիշյալ երկու ուղղումները կատարենք ՊԵԿ նախագահի հաշվարկներում, ապա 2019թ. հարկային եկամուտները կստացվեն 1426.5 մլրդ դրամ, որը 2019թ. պլանավորվածից ավելի է ոչ թե 62, այլ 25.5 մլրդ դրամով: Իսկ եթե հաշվի առնենք նաև, որ ՀՆԱ-ից ստացվող եկամուտները

⁷https://news.am/arm/news/517050.html?fbclid=IwAR3pwjBHwlzSXekokIdrBijzmzhs_GxWVV5e4Dew6Zo_inp5Qns879aKjoHg

⁸ ՀՀ ՊԵԿ, Հարկային վիճակագրական տվյալներ, «2019 թվականի ապրիլ ամսվա Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն», էլ. հղում՝ http://petekamutner.am/Shared/Documents/ts/ti/Tax_Statistics/Tax_Statistical_Data/2019/vt_hhpek_ek_amut_2019_apr.xlsx

արդեն պլանում ներառված են, ապա Դ. Անանյանի նշած ցուցանիշներից հնարավոր չի լինի ստանալ որևէ գերակատարման թիվ: Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ կա՛մ ՊԵԿ նախագահը չունի 62 մլրդ դրամ գերակատարման որևէ հիմնավոր հաշվարկ, կա՛մ նա խոսել է բոլորովին այլ բանի մասին և լրագրողները սխալ վերնագրի տակ են ներկայացրել նրա ելույթը՝ հատկապես հաշվի առնելով այն, որ ՊԵԿ նախագահի խոսքում 62-64 մլրդ դրամով ավելի գումարը համադրվում է 2018 թվականին հարկային և մաքսային ընդհանուր հավաքագրումների հետ:

Կատարողականի առումով հակառակ պատկերն է պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվող բյուջետային մուտքերի գծով: 2019 թվականի առաջին եռամսյակում պլանավորված 10.1 մլրդ դրամի փոխարեն ստացվել է ընդամենը 5.1 մլրդ դրամ (պլանի 50.6 տոկոսը): Այս դրամաշնորհները հիմնականում ստացվում են ԵՄ-ից: Առնվազն զարմանալի է, որ հետհեղափոխական Հայաստանում, որտեղ գրանցվել է ժողովրդավարության «կտրուկ և աննախադեպ» աճ, ԵՄ-ի կողմից դրամաշնորհները ոչ թե աճում են, այլ նվազում: Իրականում, այս թերակատարման պատճառը կառավարության «բացասական» վերաբերմունքն է կապիտալ ծախսերի նկատմամբ: Կա մտավախություն, որ իրականացվող ծրագրերը արդյունավետ չեն, և պարունակում են կոռուպցիոն ռիսկեր, այդ պատճառով դրանք չեն իրականացվում կամ թերի են իրականացվում՝ վատթարացնելով հարաբերությունները դոնորների հետ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2019 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 288.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 2.3%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 283.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 4.9%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 5.4 մլրդ դրամ, որտեղ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 5.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 61.3%-ով:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերը (տնտեսագիտական դասակարգմամբ) 2019թ. առաջին եռամսյակում, մլրդ դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Առաջին եռամսյակի պլան ⁹	Առաջին եռամսյակի ճշտված պլան ¹⁰	Փաստ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	355.4	364.7	288.5	79.1%
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	326.7	336.0	283.1	84.3%
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	35.7	35.6	31.5	88.6%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	41.7	41.7	23.5	56.4%
Տոկոսավճարներ	37.0	37.0	35.2	95.2%
Սուբսիդիաներ	24.8	26.3	24.9	94.9%
Դրամաշնորհներ	27.9	29.3	25.2	86.0%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	106.5	113.0	106.1	93.9%
Այլ ծախսեր	53.1	53.2	36.7	69.0%
ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ (ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)	28.6	28.8	5.4	18.9%
այդ թվում՝				
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	28.6	28.8	5.6	19.4%
Հիմնական միջոցներ, որից՝	28.6	28.8	5.6	19.4%
Շենքեր և շինություններ	21.9	21.9	5.2	23.5%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	6.1	6.2	0.4	6.4%
Այլ հիմնական միջոցներ	0.7	0.7	0.0	-
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացված մուտքեր	-	-	-0,2	-

Պետական բյուջեն ծախսերի մասով ընթացիկ տարվա առաջին եռամսյակում թերակատարվել է: Ընդհանուր ծախսերը ճշտված ծրագրով նախատեսված 364.7

⁹ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

¹⁰ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

մլրդ դրամի փոխարեն կազմել են 288.5 մլրդ դրամ՝ թերակատարվելով 76.2 մլրդ դրամով (20.9 տոկոսով):

Ընթացիկ ծախսերը թերակատարվել են 52.9 մլրդ դրամով կամ 15.7 տոկոսով: Սակայն, ավելի խնդրահարույց է կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների) թերակատարումը: Վերջինս, ըստ ճշտված պլանի, նախատեսվել է 28.8 մլրդ դրամ, սակայն իրականացվել է ընդամենը 5.4 մլրդ դրամի ծախսերը (թերակատարումը կազմել է 81.1 տոկոս): Կապիտալ ծախսերի թերակատարումը ունի երկու հիմնական պատճառ: Առաջինը կապված է վերը նշված այն մտավախության հետ, որ իրականացվող կապիտալ ծրագրերը արդյունավետ չեն, և պարունակում են կոռուպցիոն ռիսկեր, այդ պատճառով էլ դրանք չեն իրականացվում: Հաջորդ խնդիրը կապված է ԾԻԳ-երի փակման և դրանց կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակ տալու հետ: Այս անցումային գործընթացը արդեն չափազանց երկար է ձգձգվում, ինչի հետևանքով ծրագրերի անմիջական իրականացնողները, գտնվելով անորոշության մեջ, չեն կարողանում ապահովել աշխատանքների կատարողականը և չեն ստանում ֆինանսավորումը: Այսպիսով, կառավարության խիստ զգուշավոր քաղաքականության վարման արդյունքում, կապիտալ ծախսերը թերակատարվում են, դրամաշնորհները և վարկային միջոցները չեն ստացվում, և վատթարանում է երկրի վարկանիշը դոնորների շրջանում:

Կապիտալ ծախսերի թերակատարումը խիստ բացասաբար կարող է անդրադառնալ երկարաժամկետ տնտեսական աճի համար՝ հանգեցնելով ՀՆԱ-ի պոտենցիալ մակարդակի նվազմանը: Ի տարբերություն ընթացիկ ծախսերի՝ կապիտալ ծախսերի ստեղծած արդյունքից (ճանապարհների կառուցում և վերանորոգում, ոռոգման համակարգերի կառուցում, այլ ենթակառուցվածքների բարելավում) օգտվում են տնտեսության բոլոր հատվածները. նվազում են կազմակերպությունների միավոր ծախսերը, աճում են արտադրողականությունը և կազմակերպությունների արտադրանք թողարկելու ներուժային մակարդակը: Այսինքն՝ կառավարության վարած քաղաքականությունը պետք է միտված լինի ոչ թե կապիտալ ծախսերի նվազեցմանը, այլ անարդյունավետ ծախսերի շրջանակում առաջացող ռիսկերի զսպմանը:

Բացի այդ, կարևոր է հիշել, որ տնտեսությունում կապիտալի մաշվածքը (ամորտիզացիան) հանգեցնում է կապիտալի պաշարի նվազմանը (Սուլուի տնտեսական աճի դասական մոդել), որն իր հերթին վերոհիշյալ մեխանիզմով հանգեցնում է արտադրության ներուժային մակարդակի, այնուհետև ՀՆԱ-ի իրական աճի անկմանը: Հետևաբար, տրամաբանական է, որ կապիտալի պաշարի կայուն մակարդակ ապահովելու համար, կապիտալ ներդրումները պետք է լինեն առնվազն մաշվածքից ոչ պակաս: Իհարկե գործնականում ՀՀ տնտեսության

համար կապիտալի պաշարը, առավել ևս՝ մաշվածքի չափը, հնարավոր չէ հաշվել, սակայն բերված տնտեսագիտական տեսության հիմնադրույթներից մեկը նույնպես փաստում է, որ կապիտալ ծախսերի թերակատարումը կարող է վտանգավոր հետևանքներ ունենալ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ

2019թ. առաջին եռամսյակում պետական բյուջեն եղել է հավելուրդային՝ կազմելով 31.2 մլրդ դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորվել էր պետական բյուջեի դեֆիցիտ 26.3 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները 2019թ. առաջին եռամսյակում, մլրդ դրամ

	Առաջին եռամսյակի պլան ¹¹	Առաջին եռամսյակի ճշտված պլան ¹²	Փաստ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	308.0	309.7	319.8	103.3%
ԾԱԽՍԵՐ	355.4	364.7	288.5	79.1%
ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)	47.4	55.1	-31.2	-56.8%

Սակայն, բյուջեն հավելուրդային չէր ծրագրվել: 2019թ. առաջին եռամսյակի ճշտված պլանով բյուջեի պակասուրդը պետք է կազմեր 55.1 մլրդ դրամ, սակայն ծախսերի թերակատարման և հարկերի գերակատարման հաշվին ձևավորվել է բյուջեի հավելուրդ: Փաստորեն, բյուջեի սխալ պլանավորման արդյունքում փոխվել է հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը՝ ծրագրված չեզոքից դառնալով զսպող: Սա բացասական երևույթ է, քանի որ պլանավորված հարկաբյուջետային քաղաքականությունը միտված է արդյունավետ կարգավորելու ամբողջական պահանջարկը՝ խթանելով տնտեսությունն անկման և զսպելով աճի փուլերում: Սակայն, ստացվում է, որ կառավարությունը զսպում է տնտեսությունն այն պայմաններում, երբ տնտեսական աճը և տնտեսության կարևոր գերակա ճյուղերի աճերը դանդաղում են: Նման քաղաքականությունը կհանգեցնի աճի ավելի դանդաղմանը:

¹¹ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

¹² Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿԸ

Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2019 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է 1.2 զսպող հարկաբյուջետային ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների չեզոք (-0.2) և ծախսերի զսպող (-1.1) ազդեցություններով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսական աճի կառուցվածքը վերլուծելուց և տնտեսության հատվածների հետ համադրելուց հետո հանգում ենք այն եզրակացությանը, որ **7.1 տոկոս իրական ՀՆԱ-ի աճը կայուն չէ**: Մասնավորապես, նշենք այս եզրահանգման հետևյալ պատճառները.

Ոչ արտահանելի հատվածը շարունակում է իր դիրքերն ամրապնդել՝ որպես տնտեսական աճի շարժիչ ուժ, ընդ որում՝ ֆինանսավորվում է վարկերի հաշվին: Ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ. առաջին եռամսյակում, տնտեսական աճը առավելապես պայմանավորված է եղել ծառայությունների աճով (2018թ. 5.2 տոկոս տնտեսական աճի 4.8-ը, իսկ 2019թ.-ի առաջին եռամսյակում՝ 7.1 տոկոսից 5.7-ը պայմանավորված էր ծառայությունների աճով): Ծառայությունների աճը, իր հերթին, մեծ մասամբ պայմանավորված է մշակույթի, զվարճությունների և հանգստի, ինչպես նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով, որոնք ոչ արտահանելի ճյուղեր են և հիմնված են ներքին պահանջարկի վրա:

Ընդ որում, վտանգ է ներկայացնում ոչ միայն այն, թե ինչ կառուցվածք ունի տնտեսական աճը, այլ նաև այն, թե որ աղբյուրների հաշվին է տեղի ունենում ներքին պահանջարկի աճը, որը հանգեցնում է տնտեսության ոչ արտահանելի հատվածի աճին: Խնդիրը կայանում է նրանում, որ 2018թ. ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա եղել է խիստ զսպող: ՀՀ կենտրոնական բանկն այս վարքագիծը հաշվի առնելով և դեֆյացիոն վտանգներ զգալով՝ դեռևս 2018թ. հուլիսից սկսեց ռեպո գործիքի միջոցով լիկվիդայնություն ներարկել տնտեսության մեջ¹³: Վերջնականապես այս լիկվիդայնության ներարկումը բանկային համակարգ՝ տնտեսության մեջ հայտնվեց վարկերի տեսքով, ընդ որում հիմնականում տնային տնտեսությունների համար սպառողական և հիփոթեքային վարկավորման ձևով¹⁴:

¹³ 2019թ. ապրիլի դրությամբ ռեպո գործիքի ներքո բանկային համակարգ ներարկված լիկվիդայնությունը հասավ 260 մլրդ դրամի, որն աննախադեպ է:

¹⁴ 2018թ. և 2019թ. ապրիլին սպառողական վարկերի 12 ամսյա աճը կազմել է համապատասխանաբար 37.1% և 39.6%, իսկ հիպոթեքային վարկավորման ծավալը՝ 22.1% և 30.8%:

Արդյունքում 2019թ. առաջին եռամսյակում ականատես եղանք մասնավոր սպառման արագացող աճի, ինչն էլ թղթակցվեց ոչ արտահանելի հատվածի հաշվին տնտեսական աճի հետ: Ակնհայտ է, որ վարկերի (որոնք ենթակա են վերադարձման) տեսքով բնակչության սպառման ֆինանսավորումը շատ ավելի վտանգավոր է, քան որ այդ նույն լիկվիդայնությունը հայտնվեր բնակչության մոտ բյուջետային ծախսերի միջոցով: Պետք է նշել, որ տնային տնտեսությունների եկամուտները չեն աճում վարկերի աճին համահունչ¹⁵, հետևաբար առաջիկայում կարող է նաև վարկերի սպասարկման հետ կապված խնդիր առաջանալ: Եվ եթե տնտեսական այսպիսի քաղաքականությունը շարունակվի 2019թ. ողջ տարվա ընթացքում ևս¹⁶, ապա ոչ միայն երկարաժամկետ տնտեսական աճը վտանգված կլինի, քանի որ վարկերն անվերջ չեն կարող աճել, այլ նաև դա կարող է հանգեցնել բանկերի վարկային պորտֆելների որակի վատթարացմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:

¹⁵ Միջին աշխատավարձի աճը 2019թ. առաջին եռամսյակում եղել է՝ 4.3%, օտարերկրյա դրամական փոխանցումները նվազել են 5.5 տոկոսով:

¹⁶ 2019թ. առաջին չորս ամիսների ընթացքում հիշյալ խնդիրն ավելի է խորացել, քանի որ բյուջեն եղել է 78.6 մլրդ դրամ հավելուրդով՝ հակառակ ծրագրված պակասուրդի: